վրայ կառուցուած էր անապատը, ահագին բարձրութիւնից մինչեւ գետի ափը սողալու ժամանակ, մնաց ամբողջ եւ իր վրայ ամբողջութեամբ պահպանեց անապատը: Նոյն դրութեան մէջ մնում է մինչեւ այսօր: Այդ դէպքը թէեւ համարոեցաւ մի մեծ հրաշք, այնոամենայնիւ, անապատի միաբանները այլեւս չկարողացան այնտեղ բնակոել եւ ցրիւ եկան դէպի զանազան կողմեր: Եւ այդպէս, Սիւնեաց մեծ անապատը իր գոյութիւնը պահպանեց 45 տարուց փոքրինչ աւելի, իսկ այդ սուղ ժամանակում նրա կատարած գործը մեծ եղաւ: Ինչպէս վերեւում մի առ մի ցոյց տոեցինք, նրանից ծնունդ առին ուրիշ շատ վանքեր եւ անապատներ միեւնոյն կազմակերպութեամբ, միեւնոյն կարգերով ու կանոններով...

Կարծեմ, իմ այդ համառօտ տեսութեան մէջ բաւական պարզոեցաւ, որ անապատը երկրի անապահով դրութեան եւ նոյն անապահովութիւնից առաջացած ժողովրդի յուսահատական վիճակի արդիւնքն է: Աշխարհից բաւականութիւն չգտնելով, դժգոհ լինելով, մարդը սկսում է ատել աշխարհը: Եւ որովհետեւ նա ինքը նոյնպէս աշխարհի մի մասն է կազմում, հետեւապէս սկսում է ատել եւ իր անձը: Այստեղից է առաջ գալիս այն հոգեւոր անձնասպանութիւնը, որ կրօնաւորների լեզոով կոչւում է ճգնաւորութիւն, խստակեցութիւն եւ մարմնամաշութիւն: Անապատականը դրսից, նոյն իսկ աշխարհից է ստանում անձնասպանութեան այդ զգացմունքը եւ, իր մթին խուցի մէջ զարգացնելով, կրկին վերադարձնում է աշխարհին: Նրանց յարաբերութիւնները փոխադարձ են: Եւ այդ պատճառով անկարելի է չնկատել այն սպանիչ, վիատեցուցիչ աղդեցութիւնը, որ գործում է անապատը իր շրջապատող ժողովրդի վրայ, մանաւանդ երբ այդ ժողովուրդը գտնւում է մօտաւորապէս ստոր զարգացման մէջ: Գործունէութիւնը, եռանդը, աշխատանքը, սէրը դէպի կեանքը՝ դադարում է այնտեղ, տիրում է ընդհանուր մեռելութիւն, եւ վանքը իր շրջակայ բնակիչներով ներկայացնում է մի ընդարձակ անապատ... Այդ կէտից նայելով, անապատների թոից կարելի է իմանալ մի ժողովրդի թէ՛ զարգացման աստիճանը եւ թէ՛ գործունէութեան չափը: Եւ որովհետեւ իմ պատմութիւնը ամփոփւում է միայն մի նեղ շրջանակի մէջ, այն է՝ Հայաստանի նշանաւոր նահանգներից մէկը՝ Վասպուրականը, ես ցոյց կը տամ, թէ այդ նահանգում մի ժամանակ որքա՜ն վանքեր ու անապատներ կային, եւ նրանց թոից կարելի է եզրակացնել այն մահացու եւ ծանր հիւանդութիւնը, որ այդ նահանգի անկման պատճառ դարձաւ:

Վասպուրականը Արծրունի նախարարների սեփականութիւնն էր: Տասներորդ դարու սկզբում Արծրունի իշխանները այն աստիճան զօրացան, որ նրանցից մէկը, Գագիկը, ապստամբոեցաւ Բագրատունեաց թագաւորու-